ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Այն ժամանակ իսկոյն պահիկ մի հեռանամ եւ արքային նախապատրաստեմ, որ ոչ մի լուր չկա:

ՆԱԶԻՐ.– Ճշմարիտ կետին նշանեցիր, տէ՛ր իմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Դուրս է գնամ դիմացից, բայց եւ իսկոյն դրսից մօտենալով վարագոյրին՝ սկսում է այնտեղից ականջ դնել: Երեւում է նրա կերպարանքը վարագոյրի հետեւից:)

ՆԱԶԻՐ.– (Վեզիրին ցած) Չի գնացել, ականջ է դնում,

ՎԵԶԻՐ.– (Ցած) Աւելի լաւ: Եւ երեւում է, որ գիտէ լուրը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս է նայում վարագոյրի ճեղքից:)

ՎԵԶԻՐ.– Ախ, ինչպէ՞ս տեղեկացնենք թագաւորին, որ մենք այդ լուրին չենք հաւատում:

ՆԱԶԻՐ.– Ահա, տես, տէր իմ, ես ասում եմ, որ ժողովուրդը ապստամբել է թագաւորի դէմ:

ՎԵԶԻՐ.– Ահա եւ ես, ասում եմ, որ խռնւում է պալատի շուրջը: (Սենեկապետը վարագոյրի ճեղքից նայում է: Նազիրը եւ վեզիրը նոյնպէս նայում են Սենեկապետին: Երեքն էլ բռնւում են եւ անշարժ իրար երեսի նայում:)

ՆԱԶԻՐ.– Աչքերս վշտից կարճատես են դառել:

ՎԵԶԻՐ.– Տուայտանքից կուրացածի պէս եմ:

ՆԱԶԻՐ.– Ինչպէ՞ս է արքայից արքան:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Անդորը, ինչպէս ծովի հատակը:

ՎԵԶԻՐ.– Փա՛ռք աստծոյ:

ՆԱԶԻՐ.– Քանի որ կան տէրութիւններ, որոնց ժողովուրդը ապստամբում է թագաւորի դէմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Այո՛, այլայլումն ինչ-ինչ եւ տուայտանք պէս-պէս:

ՆԱԶԻՐ.– Եթէ արքայի կեանքին վտանգ սպառնայ, բաւական է մեր մասին մտածես, քնած տեղից անգամ իբրեւ նետ կթռչենք օգնութեան:

ՎԵԶԻՐ.– Եւ կյաղթենք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Տեա՛ռք: Իմ սիրտն ու միտքը ստուերի պէս շրջում են ձեր հետքից: Կարիքի դէպքում իմ հաւատքս ձեզ հետ է:

ՆԱԶԻՐ, ՎԵԶԻՐ.– Եւ մերը ձեզ հետ: (Գլուխ են տալիս) Տէր ի՛մ:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Տէր ի՛մ, (Գլուխ են տալիս: Նազիր եւ վեզիր հեռանում են: Նրանց հետեւից:) «Երեխան խաշուե՛ց, օրհնեալնե՛ր. ուրի՛շը բերէք»:

Վարագոյրի հետեւում ձայներ: Սենեկապետը թաքչում է նրա ծալքերում: